



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգաբանական զարգացման գործում**

Առարկան՝ **Ինֆորմատիկա**

Հետազոտող ուսուցիչ՝ **Մուրադյան Մարգո**

Ուսումնական հաստատություն՝ **Նեղոցի հիմնական դպրոց**

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Ինչու է առաջանում ինտերնետային կախվածություն.....	5
Ինչպե՞ս երեխաներին հեռացնել էկրաններից.....	9
Ինչպես դարձնել աշխատանքը համացանցում անվտանգ և ապահով.....	12
Եզրակացություն.....	14
Օգտագործված գրականության ցանկ.....	16

Ժամանակը և ժամանակակից տեխնոլոգիաները հոյակապ ուսուցիչներ են, սակայն, ցավոք, վերջիններս իրենց աշակերտներին սպառնում են ծերությամբ: Ժամանակը երբեք կանգ չի առնում, կյանքը մշտապես զարգանում է, մարդկային փոխհարաբերությունները, աշխարհընկալումն ու աշխարհաճանաչումը օր-օրի փոխվում են: Մարդը, տանը նստած կարող է իմանալ ամեն ինչ՝ շնորհիվ նոր տեխնոլոգիաների: Ինչպես գիտեք, օրեցօր ինտերնետից օգտվողների քանակն աճում է և աճում է ոչ թե մեկ անձով, այլ հարյուրավոր օգտատերեր են միանում համաշխարհային սարդոստայնին: Սարդոստայն ասվածը շատ դիպուկ է, քանզի մուտք գործողը չի կարողանում այդ տեղից ելքը գտնել: Մեր երկրում ամեն օր ավելանում են համակարգչից և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվողների քանակը, որը ունի իր դրական և բացասական կողմերը: Սոցիալական ցանցը համակարգ է, որն իր մեջ ներառում է բազմաթիվ գործող անձինք, ովքեր հնարավորություն են ստանում փոխհարաբերվել միմյանց հետ, և որոնց միջև ձևավորված կապերը համարվում են սոցիալական, այսինքն՝ ընկերություն, համատեղ աշխատանք կամ ինֆորմացիայի փոխանակում:

Այս հետազոտության առարկան է սոցիալական ցանցերի ազդեցությունը դեռահասի անձի ձևավորման վրա:

Հետազոտության օբյեկտը՝ դեռահասի անձի ձևավորման հոգեբանական ասպեկտները:

Հետազոտության վարկածը ենթադրում է, որ սոցիալական ցանցերում համեմատաբար երկար ժամանակ անցկացնելու դեպքում դեռահասի համար ավելի նշանակալի են դառնում նյութական արժեքները, որոնք սխալ հետևանքների են բերում հոգեբանական զարգացման տեսանկյունից:

Հետազոտության խնդիրն է հասկանալ, թե ինչու է առաջանում կախվածություն տեղեկատվական տեխնոլոգիաների հանդեպ, որո՞նք են նրա առավելություններն ու թերությունները, ինչն էլ իր հերթին առաջ է քաշում հետևյալ խնդիրները. Սոցցանցերում երկար ժամանակ անցկացնելու դեպքում փոփոխությունների են ենթարկվում դեռահասների արժեքային համակարգը, նրանց համար ավելի նշանակալի են դառնում նյութական արժեքները, ինչն էլ իր հերթին անդրադառնում է նրանց դիրքորոշումների, վարքագծի և հոգեբանական զարգացման վրա:

Հետազոտության նպատակն է՝ ցույց տալ այն ուղիները, որով կարելի կլինի երեխային հնարավորինս հեռու պահել էկրաններից, աշխատանքը համացանցում դարձնել անվտանգ ու ապահով, ինչն էլ հնարավորություն կտա ճիշտ գնահատել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման գործում:

Հետազոտական աշխատանքի նշանակությունը և կարևորությունը այն է, որ կարողանանք այնպես անել, որ տեղեկատվական տեխնոլոգիաները ժամանցի և հաղորդակցման աղբյուր լինելուց բացի երեխաների համար ծառայեն՝ ինքնակրթության:

Համացանցը, անկասկած, ինֆորմացիայի լավագույն աղբյուր է ինքնարտահայտման, ինքնազարգացման, անձնական ընդունակությունների աճի դրսևորման: Հետևաբար անհրաժեշտ է սոցիալական ցանցերից օգտվողների սոցիալ-հոգեբանական անվտանգության տեսանկյունից վերահսկել ստացվող ինֆորմացիայի բովանդակությունը, երեխայի աշխատանքը համացանցում դարձնել ապահով և անվտանգ, ճիշտ վեր հանել համացանցի առավելությունները և թերությունները:

Հոգեբաններն առանձնացնում են երեխաների և դեռահասների մոտ համակարգչային կախվածության հանդեպ նախատրամադրվածության պայմանները: Դրանք են՝ ծնողների կողմից անուշադրությունը, լքվածությունը, շրջապատում անհաջողակ լինելը, անլիարժեքության բարդույթը, ընկերների բացակայությունը, այլ հետաքրքրությունների բացակայությունը և այլն: Այս գործոնները բոլորը միասին ստեղծում են, այսպես կոչված՝ ռիսկի խումբը: Սակայն դրանք պայմանական են և համակարգչային կախվածության բավարար պայման չեն, ինչպես կարող են նաև բացակայել կախվածություն ունեցող անհատի մոտ: Իսկ ի՞նչն է համակարգչի մեջ առաջացնում կախվածություն, ի՞նչն է մարդկանց գրավում և հափշտակում այն աստիճան, որ մասնագետները համակարգչային կախվածությունը համեմատում են թմրամոլության և ալկոհոլամոլության հետ: առանձնացնում են համակարգչային կախվածության երկու կողմ՝ կախվածություն խաղերից և համացանցից: Համակարգչային խաղերից կախվածությունը, ընդհանրապես, խաղերից կախվածության(խաղամոլության) մի տեսակ է համարվում: Ինտերնետ կախվածությունն ունեցող անձանց համացանցում հիմնականում ամենից շատ գրավում է շփումը հեշտ սկսվելու և սեփական կանոններով շփվելու, շփումը ցանկացած պահի դադարեցնելու, ինչպես նաև նոր, փորձնական ես-կերպար ստեղծելու հնարավորությունը: Այս դեպքում դու բոլորովին զրոյից ես սկսում, քեզ չեն սահմանափակում քո իրական արտաքինը, սեռը, բնավորությունը, կարող ես հանդես գալ այնպիսին, ինչպիսին ուզում ես լինել: Այդ իսկ պատճառով, այսպիսի կախվածություն ունեցող մարդկանց մեծամասնությունը լավ հարմարված չեն իրենց շրջապատին, ունեն ներանձնային կոնֆլիկտներ, որոնցից համացանց փախչելու փոխարեն ավելի խելամիտ կլիներ փորձել հաղթահարել դրանք և վերացնել: Խաղամոլները համակարգչային խաղերում նույնպես հնարավորություն ունեն նոր կերպար ստեղծելու, իրենց չիրականացած ցանկությունները արտացոլելու էկրանին և գրավելու այն սոցիալական դիրքը, որն անտեսանելի է նրանց իրական կյանքում: Այդ ամենին գումարվում է խաղերի էֆեկտները, հետաքրքրությունը, ներքաշող սյուժեն, որն ստիպում է մրցակցության մեջ մտնել և անընդհատ նոր <<ձեռքբերումների>> հետևից ընկնել: Այս ամենի հիման վրա մասնագետները համարում են, որ համակարգչային կախվածության հիմքում ընկած է կյանքի և աշխարհի ընկալման, ինֆորմացիայի փոխանակման խանգարումը, երբ իրականությունը աղավաղված է ընկալվում և չի տարբերակվում վիրտուալը իրականից: Վիրտուալը դառնում է իրականում գոյություն ունեցող պահանջումների (սիրո, հարգանքի, հոգատարության, առաջընթացի)

բավարարման միջոց կամ այլ կերպ ասած՝ փախուստի ապաստան: Այնուամենայնիվ, ինչու է պետք ազատվել համակարգչային կախվածությունից: Չէ՞ որ համակարգիչը բնավ չարիք չէ, այն ուղղակի գործիք է և պետք է ուղղակի իմանալ, թե ինչպես ճիշտ օգտագործել: Դա չի նշանակում, որ պետք չէ համակարգչային խաղեր խաղալ և ինտերնետում շփվել ընկերների հետ: Սրանք խաղեր են, որոնք թույլ են տալիս հանգստանալ, ազատվել առօրյա սթրեսից, սակայն մինչև այն պահը, երբ դրանք դադարում են կատարել այդ ֆունկցիան, ու իրենք են դառնում հոգնածության, հիվանդագիտության, գրգռվածության, տեսողության վատացման, անընդհատ քնելու ցանկության, հիշողության բթացման պատճառ, ընտանիքը, համալսարանը, դպրոցը վերածվում են երկրորդային և խանգարող գործոնների, դժվարություններ են առաջանում շփման մեջ: Համակարգչային կախվածությունը կանխարգելելու համար պետք է անել այն, ինչ մենք բոլորս էլ գիտենք՝ շատ չնստել համակարգչի դիմաց, պահպանել սոցիալական շփումները, երեկոյան դուրս գալ զբոսանքի ընկերների, ընտանիքի անդամների կամ ձեր շան հետ, կառավարել սեփական ժամանակը, սովորել ղեկավարել հույզերը, պահպանել այլ հետաքրքրություններ, գրքեր կարդալ, անգամ հեռուստացույց նայելն է օգտակար համակարգչից կտրվելու համար: Կարևոր է բեռնաթափման օրեր կազմակերպել, երբ չես մտնում համացանց և ժամանակդ անիմաստ չես վատնում համակարգչի առջև: Ե՛վ հիշեք օգտակար մի դիտարկում. Համակարգչից հեռու անցկացրած ամեն ժամից, դրա դիմաց նստելու ցանկությունն ավելի է մարում: Հետևաբար, հիմնական գործոնները, որոնք մղում են չափազանց տարվածության ինտերնետով, հետևյալն են. **Շփումների պակաս իրական կյանքում:** Ինտերնետից կախված մարդկանց մեծամասնությունը <<նստում է>> ցանցում շփման համար, քանի որ շփումներն այնտեղ, իրենց կարծիքով, ունեն առավելություն՝ իրական շփումների համեմատ:

Պաշտպանվածության զգացումը ցանցում. Ըստ հարցումների՝ ինտերնետից կախված մարդկանց գրավում են ցանցի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են թաքնված մնալը, հասանելիությունը, անվտանգությունը և շփման դուրսի լինելը: **Իրականությունից հեռանալու հնարավորությունը.** Կարելի է վստահաբար նշել, որ այսօր ինտերնետը դարձել է միջոցներից մեկը ստեղծելու սեփական <<օդային ամրոցը>>, որտեղ չկան ուղղակի կապեր գոյություն ունեցող աշխարհի հետ, չկան անմիջական շփումներ իրական անձանց հետ: <<**Տեղեկատվական վամպիրիզմ**>>. Քանի որ ինտերնետը ապահովում է անսահմանափակ քանակությամբ տեղեկատվություն, այն կարող է մարդու մարդու մեջ առաջացնել <<տեղեկատվական վամպիրիզմ>>, այսինքն՝ նա աշխատում է կլանել որքան հանարավոր է

շատ տեղեկատվություն: Տեղեկատվական տեխնոլոգիաների հանդեպ չափազանց տարվածությունը երեխաների մոտ բերում է հետևյալ խնդիրները.

ա) Մեկուսացում իրական կյանքից. Համացանցում երկար ժամանակ անցկացնելու արդյունքում երեխաները քիչ ժամանակ են հատկացնում ընկերների, ընտանիքի անդամների հետ շփվելուն:

բ) Անձնական ինֆորմացիայի փոխանակում. Երեխաները հետաքրքրված լինելով սոցիալական շփմամբ, չեն վերլուծում, թե որ ինֆորմացիան կարելի է հրապարակել, իսկ որը՝ ոչ: Ցանկացած նյութ, որը մեկ անգամ տեղադրվում է համացանցում, ընդմիշտ մնում է այնտեղ: Նույնիսկ անձնական էջը ջնջելուց հետո այդ ինֆորմացիան ամբողջությամբ չի ջնջվում և ենթակա է վերականգնման:

գ) Ապրումակցելու ունակության նվազում. Սոցիալական ցանցերում ոչ խոսքային հաղորդակցման բացակայության պատճառով անձը հեշտությամբ կարողանում է թաքցնել իր իրական ապրումները կամ ցույց տալ կեղծ ապրումներ:

դ) Վարքագծի նոր մոդելի ձևավորում. Սոցիալական ցանցերի օգտագործողների մեծ մասը սկսում է ուրիշներին հաղորդել այնպիսի ինֆորմացիա, որը ոչ մեկին անհրաժեշտ չէ, և դա անում է այն պատճառով, որ հնարավորություն ունի:

ե) Ոչ ֆորմալ խմբում հայտնվելու ռիսկ. սոցիալական ցանցում չվերահսկվող և անսահմանափակ ազատության պատճառով երեխաները կարող են հայտնվել այնպիսի խմբերում, ինչպիսիք են թմրամոլների, աղանդավորների, քրեական ուղղվածություն ունեցող և այլ խմբերը:

զ) Փոխհարաբերությունների էթիկայի խախտում. Սոցիալական ցանցերը մարդկանց հնարավորություն են տալիս պահպանել անանունությունը, հանդես գալ կեղծանուններով, ստեղծել իրենց վիրտուալ ես-ը և ներկայանալ այնպես, ինչպես ցանկանում են:

Հետազոտությունն անցկացվել է Լոռու մարզի Նեղոցի հիմնական դպրոցում, որին մասնակցել են 8-րդ և 9-րդ դասարանների(երկկոմպլեկտ դասարան) 8 աշակերտներ՝ 4 տղա, 4 աղջիկ: Հետազոտության նպատակն է՝ հասկանալ ինչ նշանակություն ունեն սոցիալական ցանցերը երեխաների համար: Հետազոտությունից պարզ դարձավ, որ մեծամասնության համար սոցիալական ցանցը պարզապես զբաղմունք է:

Պետք է հաճախ շփվել երեխայի հետ, օգնել նրան սովորել շփվել մարդկանց հետ իրական կյանքում: Պետք է երեխան կարողանա տարբերել կարևորը երկրորդականից, լավ ու կարևոր ինֆորմացիան անկարևոր և վնասակար նյութերից ու դա գործնականում կիրառի: Պետք է անել ամեն հնարավորը, որ երեխան տեղեկատվական նոր տեխնոլոգիաներն օգտագործի իր շահերի համար, ինքնակրթության, նորը ստեղծելու, աշխարհը ճանաչելու և ճիշտ գնահատելու համար: Տեղեկատվության այս բազմազանության մեջ պետք է երեխային օգնի ծնողի ճիշտ վերահսկողությունը:

ԻՆՉՊԵՍ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՀԵՌԱՑՆԵԼ ԷԿՐԱՆՆԵՐԻՑ

Էկրանի մոտ ժամանակ անցկացնելու բացասական հետևանքների մասին երևի թե բոլորս էլ գիտենք՝ ագրեսիա, դեպրեսիա, գիրություն, առողջական և ակադեմիական խնդիրներ, սոցիալական հարաբերությունների դեգրադացիա և այլն: Եթե նույնիսկ չհավատանք գիտական ուսումնասիրություններին, եկեք մի պահ ուշադիր նայենք դպրոցահասակ երեխային՝ գամված էկրանին, կուչ եկած նստած, մատերի բուռն շարժումներով մինի կոճակներ սեղմելիս: Այս տեսարանը սովորական է դարձել ամենուր՝ տանը, բակում, դպրոցում:

Ի տարբերություն մեծահասակների(չնայած մեծերի համար էլ պարտադիր է, բայց մանկական տարիքում սա շատ ավելի վտանգավոր հետևանքներ ունի) երեխաներն օրվա ընթացքում մի քանի ժամ ակտիվ շարժվելու բնական կարիք ունեն, եթե նույնիսկ մյուս բոլոր հետևանքները դնենք մ կող, սա արդեն բավական է: Մեր օրերում երեխաները չափից դուրս շատ նստակյաց և պասիվ կյանք են վարում և սա անհանգստանալու տեղիք է տալիս: Բոլոր նրանց համար, որոնք ցանկանում են իրենց երեխաներին պոկել էկրաններից, բայց չգիտեն, թե ինչպես, ահա մի փոքրիկ ուղեցույց:

Սկսեք պարզից. եթե որոշել եք սահմանափակել ձեր երեխայի էկրանային ժամանակը, ապա սկսեք պարզ և հստակ կանոններից, օրինակ՝ թույլատրեք օրական կես ժամ, կամ ամեն օր՝ 16:00-18:00-ն: Կամ պլանշետից օգտվել թույլատրվում է շաբաթվա մեջ միայն մեկ օր, կամ միայն շաբաթ և կիրակի՝ 1-ական ժամով. Կամ ընտրեք այն տարբերակը, որն առավել հարմար է ձեր ընտանիքի համար: Կախված ձեր երեխայի տարիքից և առանձնահատկություններից՝ կարող եք նրան էլ ներգրավել որոշման կայացման մեջ:

Կանոններին հետևեք նաև դուք. անհրաժեշտ է երեխաներին սեփական օրինակով խրախուսել: Եթե դուք անընդհատ անհետաձգելի հեռախոսազանգերի կամ նամակների եք պատասխանում, դրանով դուք երեխային ցույց եք տալիս, որ ընտանեկան ժամանակը միասին անցկացնելը ձեզ համար կարևոր չէ, և ձեր կանոնները պարզապես քմահաճույք են: Հիշեք <<Ինչ որ ցանես, այն կհնձես>> հայկական ասացվածքը և օրինակ ծառայեք երեխաների համար:

Ձեր ժամանակը տրամադրեք երեխաներին. շատ հաճախ հեռուստացույցը փրկարար դայակի դեր է տանում, և եթե դուք հրաժարվում եք նրանից, ուրեմն հաշվի առեք, որ դուք պետք է

երեխաներին զբաղեցնեք կամ նրանց հետ ինչ-որ բան անեք: Երկուսդ էլ (ծնողների մասին է խոսքը) պետք է պատրաստ լինեք առօրյա գործերից և հոգսերից կտրվելու և երեխաներին ժամանակ տրամադրելու համար:

Մշակեք ռազմավարություն. նկատի ունեցեք, որ ձեր երեխայից կպահանջվի նվազագույնը երկու շաբաթ նոր սովորությանը հարմարվելու համար: Դրա համար նախօրոք պլանավորեք, թե ինչով պիտի ձեր երեխան զբաղվի և պատրաստ եղեք, որ նա օրական մի քանի հարյուր անգամ կիսնդրի խաղալ կամ իր վարքի տարբեր դրսևորումներով կփորձի ձեզ մանիպուլացիայի ենթարկել և նոր կանոնը հանել օրակարգից: Որքան հաստատակամ լինեք, այնքան ձեր երեխան ավելի հեշտ կհարմարվի նոր իրադրությանը:

Պլանավորեք ավտերնատիվ զբաղմունքներ. քանի որ ձեր երեխան ունենալու է ազատ ժամանակ և ինքը դեռ ինքնուրույն չի կարողանալու որոշել, թե ինչով զբաղվել, որպես մեծահասակ՝ պլանավորեք նրա համար տարբեր զբաղմունքներ՝ սեղանի խաղեր (լոտո, շախմատ, մոնոպոլիա), միասին պատրաստեք հետաքրքիր կերակրատեսակ կամ թխվածք, գնացեք թանգարան, թատրոն, համերգ, գրադարանից ընտրեք գիրք՝ միասին կարդալու համար, զբաղվեք բացօթյա մարմնամարզությամբ, կազմակերպեք արշավ երեխայի ընկերների հետ, մեծ փազլ հավաքենք և այլն:

Եղեք հաստատակամ. դուք եք մեծահասակը, և հետևաբար ձեր ընտանիքի առողջության և ապահովության պատասխանատվությունը ձեր ուսերին է: Չնայած որ երեխան պահի տակ կթվա դժբախտ, կցուցաբերի ագրեսիա, երբեմն նույնիսկ կասի, որ ատում է ձեզ, միևնույն է, կանոնը մնում է կանոն: Եղեք համբերատար և երեխան վերջիվերջո կհանդարտվի:

Երբեք չի կարելի էկրանի սահմանափակումը օգտագործել որպես պատժամիջոց կամ սպառնալիք: Անհրաժեշտ է կանոնը կիրառելուց առաջ զրուցել երեխայի հետ: Բացատրեք նրան ձեր տեսակետը: Ասեք, որ քաջ գիտակցում եք, որ իր համար սկզբում դժվար է լինելու, դրա համար դուք պատրաստ եք նրան աջակցել ցանկացած հարցում: Հարկ եղած դեպքում կարող եք մեղքի բաժինը զցել հոգեբանների վրա՝ հոգեբանն է ասել, պիտի ենթարկվենք (ճիշտ նույն կերպ, ինչպես եթե ասենք, ձեր երեխան հիվանդ է և դուք անխտիր հետևում եք բժշկի խորհուրդներին և ստիպում եք երեխային կուլ տալ այս կամ այն դեղահաբը և այլն):

Էկրանից օգտվելու սահմանափակումը պետք է լինի անկախ երեխայի վարքի դրսևորումներից: Երբեք դրանով չի կարելի սպառնալ՝ դասերդ չես արել, սենյակդ թափթփված

է, ճաշը չես կերել, քիմիայից 9 չես ստացել և բազմաթիվ ուրիշ պատճառներ, ուրեմն չես խաղա համակարգչով: Երեխայի կյանքի այլ ոլորտներում սխալ վարքի համար կիրառեք այլ պատժամիջոցներ՝ օրական կես ժամ հեռուստացույց նայելու իրավունք ունի, ուրեմն անկախ ամեն ինչից, տվեք նրան այդ հնարավորությունը: Եթե դա կիրառեք որպես սպառնալիք, կունենաք լրիվ հակառակ էֆեկտը:

Առաջնորդվեք առողջապահական կանոններով. հիշեք հետևյալ կանոնների մասին, որոնք բժիշկներն են խորհուրդ տալիս՝ ուտելու ժամանակ և քնելուց մեկ ժամ առաջ չի կարելի էկրանին նայել: Նաև ցանկալի չէ, որ երեխան իր սենյակում ունենա հեռուստացույց կամ համակարգիչ:

Հրաժարվեք սմաթֆոններից և պլանշետներից. մի գնեք սմաթֆոն՝ ուզում եք երեխայի հետ մշտական կապի մեջ լինել՝ գնեք նրա համար հասարակ հեռախոս, որն ունի միայն զանգ կատարելու և զանգ ընդունելու ֆունկցիա:

Հրաժարվեք պլանշետներից և երեխայի համար առանձին համակարգիչ գնելուց, և ձեր գործը ավելի կհեշտանա: Եթե որոշում եք որդեգրել այս սկզբունքը, երբեք երեխային խոսք մի տվեք, որն է առիթի դեպքում՝ ծննդյան օրը կամ Նոր տարուն գնել նրա ուզած այփադը կամ սմաթֆոնը: Նման դեպքերում, երբ երեխան խնդրում է, ուղղակի հանգիստ և հաստատակամ տեղյակ պահեք ձեր տեսակետի մասին:

Վայելեք ձեր երեխայի մանկությունը. երբ էկրանն ավելի քիչ դեր կունենա ձեր առօրյայում, դուք կնկատեք, թե աստիճանաբար ինչպես են լավանում ձեր և ձեր երեխաների, ինչպես նաև եթե ունեք 1-ից ավելի երեխաներ, ապա նաև նրանց փոխհարաբերությունները: Այս ազատված ժամանակը հնարավորություն կտա ձեր երեխային վայելելու իր մանկությունը, և դուք էլ նրա հետ միասին կուրախանաք առօրյա փոքրիկ պահերով, որ դուք անցկացնում եք միասին՝ որպես ընտանիք:

Տրամադրելով անսահման և աննախադեպ հնարավորություններ, համացանցը պարունակում է նաև բազմաթիվ վտանգներ՝ հատկապես երեխաների համար: Եթե նույնիսկ մենք հետևենք համացանցից օգտվելու բոլոր կանոններին, միևնույն է, համակարգչային վիրուսներն ու այլ վտանգներն անխուսափելի են, քանի որ համացանցը մարդկանց հաղորդակցման և շփման այնպիսի նոր միջավայր է, որտեղ շատ վաղուց հայտնի կանոններն ու օրինաչափությունները բոլորովին նոր ձևակերպումներ են ստանում: Այսօրվա համացանցը կարգավորվող միջավայր է և այնտեղ իրենց լավ են զգում միայն այն մարդիկ, ովքեր կարողանում են ճիշտ օգտագործել հորդոդ ինֆորմացիան, գործիքներն ու միջոցները, ճիշտ ղեկավարեն իրենց գործողությունները: Երեխաներին պետք է սովորեցնել հետևյալը. Դուռը փակ պահիր և հարևանիդ գող մի հանի, այսինքն՝ հնարավորինս փակ պահեք ձեր անձնական տվյալները: Եթե որոշել եք դրանք հրապարակել՝ օգտագործեք ծածկագրեր, որպեսզի միայն ձեր ընկերները կարողանան կարդալ: Ձեր ծածկագրերը պահեք ապահով: Յոթ անգամ չափիր և մեկ անգամ կտրիր, հետևաբար՝ մեկնաբանություն գրելուց առաջ 2 անգամ մտածեք, քանի որ երբ այն հայտնվեց համացանցում, այն կարող է հավերժ մնալ այնտեղ: Մի վստահեք այն ամենին, ինչ ասում են ձեզ այլ մարդիկ, նրանք կարող են կեղծ լուսանկարներ օգտագործել, կամ ստել: Փորձված թանը անփորձ մածունից լավ է, այսինքն՝ ուշադիր եղեք, թե ում հետ եք շփվում, հատկապես երբ ձեր ընկերների ցանկում ընդգրկում եք նոր մարդու: Առանց հասուկ անհրաժեշտության համակարգիչները համացանցին միացրած պետք չէ թողնել: Անսահմանափակ համացանցի կապ ունենալը լավ բան է, սակայն, անընդհատ միացրած մնալու դեպքում մեծանում է վիրուսներով և հետախուզական ծրագրերով համակարգչի վարակվելու հավանականությունը: Մի՛ օգտագործեք գաղտնաբառեր, որոնք ուղղակի կապ ունեն ձեզ հետ, օրինակ՝ ձեր անունը, ծննդյան թիվը: Կիրառեք չեզոք կամ հնարավորինս բարդ գաղտնաբառեր: Մի բացեք էլեկտրոնային փոստի հաղորդագրություններ անձանոթ աղբյուրներից և կասկածելի կցված ֆայլերով: Առանց ծնողների թույլտվության որևէ անձնական ինֆորմացիա մի՛ հայտնեք համացանցի ձեր նոր ծանոթներին: Էլեկտրոնային հաղորդագրության ընթացքում բարեկիրթ եղեք, չէ որ նույնը սպասում եք հաղորդակցից: Ծնողներ(ճիշտ վերահսկողություն իրականացնելու համար): Պետք է համակարգիչը տանը տեղադրեք այնպիսի վայրում, որ ձեզ համար ուշադրության կենտրոնում պահելը հարմար

լինի: Ընկերացեք ձեր երեխաների հետ, այնպիսի հարաբերություններ ստեղծեք, որ նրանք ազատ վստահելով ցույց տան ձեզ իրենց ստացած հաղորդագրությունները: Զրուցեք նրանց հետ մեղիա դաշտում ճիշտ կողմնորոշվելու մասին: Սովորեցրեք երեխաներին պահպանել ինտերնետային էթիկայի կանոնները: Համակարգչի վրա տեղադրեք հատուկ ծրագրեր, որոնք թույլ են տալիս սահմանափակել երեխաների հասանելիությունը դեպի անցանկալի ռեսուրսներ, դեստրուկտիվ խաղեր, հակառակ դեպքում երեխայի մոտ կփոխվի ժամանակի ընկալումը, նա կարող է դառնալ գերագրեսիվ և հիպերակտիվ: Համացանցի ճիշտ օգտագործումը կնպաստի սովորողների ինքնուրույնության, պատասխանատվության, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացմանը, արժեքային համակարգի ճիշտ ձևավորմանը: Համացանցից ճիշտ օգտվելու դեպքում կձևավորվի երեխաների ինքնակրթության մշակույթը: Օժտելով սովորողին համացանցից ինքնուրույն գիտելիք ձեռք բերելու հմտությամբ, նրան հնարավորություն է ընձեռնվում այն օգտագործել տարբեր ոլորտներում և հարստացնել իր գիտելիքների պաշարը ողջ կյանքի ընթացքում:

Ժամանակակից հասարակությունը նախորդ ժամանակաշրջանների համեմատությամբ անսովոր փոփոխական է. նրա կողմնորոշիչները շատ ավելի արագ են փոխվում, քան երբևէ ուրբազմաթիվ ուղղություններով: Գլոբալ տեղեկատվականայնացումը բնական և մարդկային կենսագործունեության նոր միջավայր է ձևավորում, և սա պետք է դիտարկել համակողմանիորեն՝ փիլիսոփայական, սոցիալական, մշակութային, հոգեբանական, մանկավարժական և այլ տեսանկյուններից:

Տեղեկատվական տեխնոլոգիաները և , հատկապես, ցանցային տեխնոլոգիաները զգալիորեն ազդում են երեխաների հոգեբանության ձևավորման վրա: Առաջանում է ենթադրություն, որ անձի կողմից տեղեկատվության քանակի ավելացումը և դրա մշակման արագացումը կարող են վնասակար ազդեցություն ունենալ երեխայի մտածողության կարողությունների զարգացման վրա: Այս պահին վտանգ կա, որ մարդն աստիճանաբար անցնում է ուղեղի գործունեության պահպանմանը, նվազմանը և երեխայի ուղեղը կենտրոնանում է միայն ինտերնետից ստացված տեղեկատվության մշակման վրա: Իր հերթին, նորարարական գաղափարների և անկախ մտքի գործընթացների թիվը կրճատվում է, և մարդկությունը մեծ մասամբ հանդես է գալիս որպես տեղեկատվության պասիվ սպառողներ: Այստեղից մենք կարող ենք եզրակացնել, որ երեխայի ուղեղը հսկայական տեղեկատվությունից, որի մեծ մասը այսպես կոչված «տեղեկատվական աղմուկն» է, և հսկայական տեղեկատվությունը մշակելու ժամանակի սղությունը, գերծանրաբեռնված է և սկսում է չհամակերպվել տրամաբանական մտածողությունը, որը կարող է անցանկալի ազդեցություն ունենալ երեխայի հոգեբանական զարգացման վրա և ազդել երեխայի կենսագործունեության որակական և քանակական ցուցանիշների վրա, ինչը արդեն նկատվել է աշխարհի շատ երկրների հոգեբանների բժշկական պրակտիկայում: Այնուամենայնիվ, եկել է տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանը, և մարդկությունը չի կարողանա հրաժարվել տեխնոլոգիական առաջընթացի ածանցյալներից երկար, հարմարավետ և ապահով կյանքի ցանկության պատճառով: Հետևաբար, անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ մարդկային քաղաքակրթության զարգացումը կամ ոչնչացումը տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով կախված է հասարակության կյանքի վրա այդ տեխնոլոգիաների ազդեցության դրական կամ բացասական ձևերի

քանակական դրսևորումից: Ուստի պետք է անել ամեն ինչ, որպեսզի բացասական ձևերը որքան
հնարավոր է քիչ ազդեցություն ունենան երեխայի հոգեբանական զարգացման գործում:

1. Վ. Մանտուլենկո <<Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում>>
2. Հ. Բայադյան, Մշակույթ և տեխնոլոգիա, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն
3. Հ. Բայադյան, Տեղեկատվական տեխնոլոգիայի տեղափոխում և մշակութային ինքնություն, <<Հայաստանը Եվրոպայի ճանապարհին>> ժողովածու
4. Հ. Բայադյան, ՏՀՏ-ին նվիրված հոդվածաշար